ԱԲՈՎԵԱՆ ԵՒ ՀԱՔՍՏՀԱՈՒԶԷՆ

Գրեց՝ ԱՐՏ. ԱԲԵՂԵԱՆ

I

Շուտով կը լրանայ հարիւր տարին այն օրուանից, երբ Արեւելեան Հայաստանի սիրտը կազմող Այրարատեան Աշխարհը Պարսկաստանից ռուսական տիրապետութեան տակ անցաւ:

Պարսիկ Շահերի օրով «Երեւանի ու Նախիջեւանի խանութիւններ» անունով ծանօթ այդ երկրամասերն էին, որոնք ռուսերի կողմից միացուելով՝ սկիզբը «Հայկական Շրջան» կոչուեցին, կցուելով որպէս վարչական առանձին միաւոր Ռուսիոյ անդրկովկասեան կալուածներին:

Դրանից առաջ արդէն, նոյն տարիի սկիզբներին, ռուսերը գրաւել էին Արեւելեան Հայաստանի լեռնային երկրամասերը՝ Գուգարք եւ Արցախ, որոնք սակայն դուրս էին մնում նորանուաճ «Հայկական Շրջան»ի սահմաններից:

Այս անունը արդէն երկար ժամանակ գործածութեան մէջ չմնաց, անդամ Երեւանի ու Նախիջեւանի համար: Նա տեղի տուաւ Նահանգային եւ Գաւառային վարչական նոր բաժանումների:

Այսպէս կամ այնպէս, Այրարատեան Դաշտը Երեւան եւ էջմիածին կենտրոններով, արդէն որպէս Հայաստան սկսեց գրաւել եւրոպացի դիտունների եւ ճամբորդների ուշադրութիւնը: Հայ քաղաքակրթութեան եւ պատմութեան այդ եւ միւս կենտրոններն էին, ինչպէս նաեւ մեր վեհափառ Ազատ Մասիսը, եւրոպացիների Նոյեան Արարատը, որ դէպի իրենց գրաւել սկսեցին օտարներին եւ դարձան ուսումնասիրութեանց ու նկարագրութեանց առարկաներ:

Դորպատի համալսարանի ուսուցչապետ Ֆրիդրիխ Պարրոտին էր վիճակուած՝ այդ ճամբու վրայ ռահվիրայ լինելու: Նա էր, որ առաջին անդամ Մասիս սարի կատարին ոտք դնելու բարեբախտութիւնը եւս ունեցաւ: Լաւ էր որ այդ օտար մարդու հետ էր նաեւ երկրի ընիկ տիրոջ՝ հայ ժողովուրդի ընտրելագոյն զաւակներից մէկը — Խաչատուր Աբովեան:

Պարրոտին հետեւեցին եւրոպացի ու մանաւանդ գերմանացի մի շարք ականաւոր ճամբորդներ՝ Ֆոխ, Վագնէր, Դիւբուա, Բոտէնըշտէդտ, Աբիխ, Հաքստհաուզէն եւ ուրիշներ:

19-րդ դարի այս եւ մի քանի ուրիշ ճամբորդներ Հայաստան աշխարհ էին դիմում զանազան առաջադրութիւններով: Ո՛րը Հայաստանի բնութիւնն էր ուզում ուսումնասիրել եւ մանաւանդ Մասիս սարը բարձրանալ. ո՛րը պատմական եւ աշխարհագրական ուսումնասիրութեանց համար էր ուզում նիւթեր հաւաքել. ո՛րն էլ մատենագրական-բանասիրական նախասիրութիւններ ունէր:

Դրանք բոլորը միայն Հայաստանը չէր որ իրենց ուշադրութեան առարկան էին դարձնում այլ ամբողջ Անդրկովկասը: Բայց եւ այնպէս նկատելի է, որ առաջին ճամբորդները գրեթէ բոլորն էլ մի յատուկ հետաքրքրութիւն են ցոյց տալիս դէպի Հայաստանը:

Մասիս սարը մի կողմից, էջմիածինը եւ մեր միւս հնութիւնները միւս կողմից առանձնապէս գրաւում էին ամէնքին: Դրան նպաստում էր անտարակոյս եւ այն պարագան, որ հայ ժողովուրդի քաղաքակրթական անցեալը, նրա պատմական դերը բաղդատաբար աւելի էին ուսումնասիրուած ու ծանօթ եւրոպացիներին, քան՝ մեր դրացիներից որեւէ մէկինը:

Այդ մասնակի հետաքրքրութեանը ոչ նրուազ չափով նպաստել է նաեւ Խաչատուր Աբովեանի անձնաւորութիւնը: Ծանօթ եւրոպական լեզուներին եւ մանաւանդ գերմաներէնին, եւրոպական նոր քաղաքակրթութեան առաջին ռահվիրան հայկական հողի վրայ՝ Աբովեան դիւրացնում է օտար դիտունների աշխատանքները մեր երկրում — թէ՛ խօսքով եւ թէ՛ գործով: Նա դրեթէ բոլոր այդ մեծ ճամբորդների ուղեկիցն է եղել, նրանց թարգմանը եւ անընպառ նիւթ մատակարարողը: Աբովեան նրանց